

ԱՄՆ ԿԸ ՔՆՆԷ

Ամերիկեան «Նիւ Եորք Թայմզ» օրաթերթը յայտարարեց, թէ ԱՄՆ-ի Արդարադատութեան Նախարարութիւնը կը քննէ այն վարկածը, թէ չինական «Թիք Թոք» ծրագիրը կրնայ օգտագործուիլ լրտեսութիւն կատարելու համար: Զինաստանի Արտաքին գործերու Նախարարութիւնը յայտարարած էր, թէ ցարդ Միացեալ Նահանգներ չկրցաւ գտնել որեւէ փաստ, թէ «Թիք Թոք» ծրագիրը կ'օգտագործուի լրտեսելու համար ամերիկացի քաղաքացիներ:



ԱՐԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՃՈՒՄԻ ԶԻՄՆԱԴՐԱՄ

Որպէս դրական նշան մը, յաջորդ շաբաթ Լիբանան պիտի այցելէ Արաբական զարգացումի հիմնադրամէն պատուիրակութիւն մը, որ պիտի հետեւի Լիբանանի մէջ իր նախ-



կին ծրագիրներու գործադրութեան: Նաեւ լիբանանեան կառավարութեան պիտի պահանջէ որոշ հատուցում, ապագային նոր ներդրումներ չկատարած: Միակ պայմանն է Նախկին պարտքին հատուցումը եւ չգործադրուած ծրագիրներուն դիմաց արգելքներու վերացումը:

Ներդրումի ծրագիրը պիտի ընդգրկէ փոխադրութեան, ջուրի, ընկերային հարցերու, հիւսիսային Լիբանանի պաղեստինեան Նահր Պարտ գաղթականի վերակառուցումի եւ սուրիացի գաղթականներու վիճակը բարելաւող ծրագիրներ:

ՍԱԼԱՄԵԻ ԶԱՐԳԱՃՆՈՒԹԻՒՆԸ

Լիբանանի Կեդրոնական դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէ երկրորդ օրն ըլլալով հարցաքննուեցաւ



Ֆրանսացի դատաւոր Օտ Պուրուզի կողմէ, որ Սալամէն պահանջեց Մայիսի կիսուն ներկայ գտնուիլ նոր հարցաքննութեան մը Փարիզի մէջ: Լիբանանի դատական իշխանութիւններ ֆրանսացի դատաւորէն պահանջեցին այս ներկայ գտնուելու պահանջը ներկայացնել Լիբանանի դատական իշխանութիւններուն միջոցով:

ԱՆՕՂԱԶՈՒ ԹՈՉՈՂ ՍԱՐԶ ՄԸ ԳՏՆՈՒԿՑ

Իսրայելեան բանակի աղբիւր մը յայտարարեց, թէ 3ըգ-պալլային պատկանող անօդաչու թռչող սարք մը գտնուած է երկրին հիւսիսային կողմը: Այս սարքը քանի մը օր առաջ անցած էր սահմանը լրտեսական գործողութիւն մը կատարելու համար եւ ինկած է նոյն վայրին մէջ:

ՏՈՒՊԱՅԻ ԿԱՌԱՎԱՐԻՉԻՆ ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Արաբական Միացեալ Եմիրութիւններու Տուպայ նահանգի կառավարիչ Մոհամմատ Պըն Ռաշեդ Ալ Մաքթում յայտարարեց, թէ իրենք պիտի շարունակեն իրենց արտա-



քին քաղաքականութիւնը, որուն ամենակարեւոր հիմքերն մէկն է երրորդ կողմի մը թոյլ չտալ իրենց հողը օգտագործելով հարուածելու Իրանը: Ան ակնարկեց, որ իրենք միշտ դրական ձեւով օժանդակած են իրանցի քաղաքացիներու եւ իրանեան ընկերութիւններու գործերը դիւրացնելուն:

Իրանի Արտաքին գործերու Նախարարութիւնը յայտարարեց, թէ Արաբական Միացեալ Եմիրութիւններ պիտի ուղարկէ իր նոր դեսպանը: Աղբիւրը ակնարկեց, որ յարաբերութիւնները բնաւ չէ խզուած երկու դրացիներուն միջեւ, սակայն որոշ յետքայլ արձանագրուած է:

ԻՍՐԱԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԿՐԱԿԱԾ Է

Իսրայելեան բանակի աղբիւր մը յայտարարեց, թէ իսրայելացի զինուորներ կրակած են պաղեստինցի երիտասարդի մը վրայ, որ փորձած է դաշունահարել զինուոր մը, գրաւեալ Արեւմտեան Ափի Ռամալլա քաղաքի հիւսը գտնուող Պէյթ Իլ իսրայելեան բնակեցման վայրին մէջ: Լարուածութիւնը հասած է իր գագաթնակետին գրաւեալ Արեւմտեան Ափին մէջ, ուր իսրայելեան բանակը պատժիչ գործողութիւններ կը կատարէ պաղեստինցի երիտասարդներու դէմ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ ՎՃԻՌԸ

Ռուսիոյ Դաշնութեան Արտաքին գործերու Նախարարութիւնը յայտարարեց, թէ Միջազգային դատարանին որոշումը՝ դատական հետապնդումի ելքարկելու Ռուսիոյ



Նախագահ Վլատիմիր Փութինը, ոչ մէկ օրինական կամ գործադիր հիմք ունի իրենց համար:

Միջազգային դատարանը վճռած էր ձերբակալել Ռուսիոյ Դաշնութեան Նախագահ Վլատիմիր Փութինը Ուքրանիոյ մէջ իր գործադրած ոճիրներուն ամբաստանութեամբ: Դատաւորները յայտարարեցին, թէ բաւարար փաստ ունին, թէ ինչպէս Փութին ուքրանացի երեխաներ փոխադրած է Ուքրանիայէն Ռուսիա ապօրինի ձեւով:

Ռուսիոյ Նախագահի խօսնակ Տմիթրի Փետրով յայտարարած էր, թէ Ռուսիա չի ճանչնար Զուլանտայի Լահէյի մէջ իր կեդրոնը ունեցող Միջազգային դատարանին վճիռները:

ԹՈՒՐԵՊԻԱ ԸՆԴՈՒՆԵՑ ՖԻՆԼԱՆՏԱՅԻ ՄԻԱՑՈՒՄԸ

Թուրքիոյ Նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան յայտարարեց, թէ որոշում կայացուց Թուրքիոյ խորհրդարանին մէջ սկսելու ֆինլանտային՝ ՆԱԹՕ-ի անդամակցութեան



քննարկումները: Ան նոյն յայտնեց, որ խորհրդարանը կը վաւերացնէ ֆինլանտայի ՆԱԹՕ-ին անդամակցութիւնը Նախագահական ընտրութիւններէն առաջ: Ընտրութիւնը տեղի պիտի ունենայ 14 Մայիսին: Ան հաստատեց, որ ֆինլանտայի անդամակցութիւնը ՆԱԹՕ-ին պիտի ունենայ դրական արդիւնք: Շուէտի պարագային, ան հաստատեց, որ պիտի շարունակեն բանակցութիւնը այդ երկրին հետ եւ իրենց հաւանութիւնը կախեալ է այդ երկրի հակահարձակական քաղաքականութենէն: Զարկ է նշել, որ Թուրքիա Շուէտէն կը պահաջէ իրեն յանձնել բոլոր քիւրտ ընդդիմադիրները, որոնք ապաստան գտած են այդ երկրին մէջ: Ըստ Թուրքիոյ, բոլոր քիւրտ ընդդիմադիրները ահաբեկիչներ են:

ԱՄՆ ԿԸ ՓՏՆՈՒ ԵՒ ՈՐԻ

Միացեալ Նահանգներու Պաշտպանութեան Նախարարութիւնը Սե Ծովու շրջանին մէջ կը փնտռէ նոր ուղիներ՝



խուսափելու համար որեւէ բախում ռուսական օդուժին հետ:

ԹՈՒՐԵՊԻՅԱ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ ՎՆԱՍԸ

Թուրքիոյ Ելեւմուտքի Նախարարութիւնը յայտարարեց, թէ երկիրը հարուածած երկրաշարժին վնասը կրնայ հաս-



նիլ 105 միլիառ տոլարի: Այս վնասը վեց անգամն է Մար-

ՓՈՒԹԻՆ-ԱՎԻԵԻ ՀԵՌԱԽՕՍԱԶԲՐՈՅՑ

Ռուսիոյ Դաշնութեան Նախագահ Վլատիմիր Փութին հեռածայնային հաղորդակցութիւն մը ունեցած է Ատրայէ-ճանի Նախագահ Իլիամ Ալիեւի հետ: Օրակարգի նիւթ-



րէն մէկն էր ապահովութեան ամրապնդումը Զարաւային Կովկասի մէջ: Նաեւ օրակարգի վրայ էր փոխադրութեան ուղիներու ապաշրջափակումը եւ տնտեսական յարաբերութեան զարգացումը տարածաշրջանին մէջ:

ՓԱՇԻՆԵԱՆ-ԽԱԶՏՈՒՐԵԱՆ ԺՈՂՈՎ

Հայաստանի Զանապետութեան Նախագահ Վահագն Խաչատուրեան այցելեց վարչապետ Նիկոլ Փաշինեանին եւ ժողովի անարտին յայտարարեց, թէ աշխարհը այսքան լարուած վիճակի մէջ չէ եղած Զամաշխարհային Բ. պատերազմէն ետք: Նախագահը գնահատած է կառավարութեան աշխատանքը եւ թափանցիկութիւնը միշտ տալով մամլոյ ասուլիսներ՝ ժողովուրդը տեղեկ պահելու համար իր շուրջ ընթացող ամեն փոփոխութենէն եւ հովովոյթ:

ԵՐԵՒԱՆԻ ԶԱՂԱՔԱԿԵՏ ԶՐԱԺԱՐԵՑԱՒ

Երեւանի քաղաքապետ Զրաչեայ Սարգսեան ներկայացուց իր հրաժարականը: Ան յայտարարեց, թէ պիտի շարունակէ աշխատիլ իշխող Զաղաքացիական Պայմանագիր կուսակցութեան հետ: Սարգսեան նոյն յայտնեց, որ փոխքաղաքապետ Տիգրան Ավինեան կ'ընտրուի քաղաքապետ:

մարա ծովու շրջանը հարուածած 1999 թուականի երկրաշարժին եւ կը կազմէ երկրի 2023-ի ամավարկին 9 առ հարիւրը:

ԶԻՆԱՍԱՆ ՊԵՏԸ Է ԼՍԷ ԶԵԼԵՆՍԵՐԻՆ

ԱՄՆ-ի Նախագահին գրասենեակը յայտարարեց, թէ Ուքրանիոյ մէջ զինադադարը պիտի չառաջնորդէ արդար խաղաղութեան մը, պահանջուածը Ուքրանիոյ հողամասի



ամբողջականութեան պահպանումն է: Ռուսիա կ'ուզէ օգտուիլ զինադադարէ՛ն՝ հաստատելու համար իր դիրքերը գրաւած շրջաններուն մէջ եւ նոր շրջաններ գրաւելու համար: Գրասենեակը նոյն յայտնեց, որ Զինաստանի Նախագահ Շի Ժինփինկ կը հաղորդակցի Ուքրանիոյ Նախագահին հետ եւ չի բաւարարուիր Ռուսիոյ Նախագահ Փութինէն իր լսածով:

Միւս կողմէ, Ռուսիոյ Դաշնութեան Նախագահի գրասենեակը յայտարարեց, թէ երկիրը ընդունեց ՄԱԿ-ի եւ Թուրքիոյ միջնորդութեամբ Ուքրանիոյ հետ կնքուած հացահատիկի արտածումի արտօնութեան համաձայնագիրը երկարաձգել 60 օրուան ժամանակամիջոցի մը համար:

ԱՄՆ-Ի ԿԵՐՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԸ ՊԱՐՏԵԻ ԴՐԱՄ ԿՈՒ ՏԱՅ

Միացեալ Նահանգներու Կեդրոնական դրամատունը, խուսափելու համար այն վիճակէն որուն ելքարկուեցան



կարգ մը դրամատուներ կանխիկ գումարի բացակայութեան պատճառով, որոշեց 12 միլիառ տոլար պարտքի տալ այն դրամատուներուն, որոնք կը տառապին կանխիկ գումարի պակասէն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՏՔԻՆԻ ՀԱՄԱԿՆՍՈՒԹԻՒՆԸ ԱԹԵՆՔԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԵՋ

Երեքշաբթի, 14 Մարտ 2023-ի երեկոյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետը հրապարակային դասախոսություններ տուա Աթենքի համալսարանին մեջ:

Յայտնենք, որ ութ տարի առաջ, Յայրապետը դասախոսած էր Նոյն համալսարանին մեջ և արժանացած պատուոյ դոկտորային:

Այս անգամ, Նոյն Ա. Օծուբեան Նիւթն էր Ս. Ներսես Շնորհալի Յայրապետին Յոյն եկեղեցւոյ հետ ունեցած կարեւորութիւնը եւ քրիստոսաբանական մօտեցումը: Դասախոսութեան ներկայ էին համալսարանի ընդհանուր նախագահը, աստուածաբանական բաժնի տնօրէնը, փրոֆեսորներ, դոկտորային ուսանողներ եւ բազմաթիւ հրաւիրեալներ:

Համալսարանի նախագահին ու աստուածաբանական բաժնի տնօրէնին բարի գալուստի խօսքէն ետք, Վեհափառ Յայրապետը իր դասախոսութեան սկիզբը շեշտեց համալսարանին դերը ընկերութեան կեանքէն ներս եւ պատմութեան ընթացքին Յունաստանի կատարած ներդրումը մարդկային մշակոյթի ու քաղաքակրթութեան մեջ: Ապա, անդրադառնալով օրուան դասախոսութեան նիւթին՝ Յայրապետը ըստ, որ Ս. Ներսես Շնորհալի Յայրապետին բազմատաղանդ հայրապետներէն մէկը եղած է. իբրեւ աստուածաբան, բանաստեղծ եւ երաժիշտ իր առանցքային ներդրումը ունեցած է մեր եկեղեցւոյ ծիսական կեանքին ու աստուածաբանական մտածողութեան մեջ:



Վեհափառ Յայրապետը իր խօսքը կեդրոնացուց Շնորհալի հայրապետին՝ Յոյն եկեղեցւոյ հետ ունեցած միջեկեղեցական յարաբերութեանը վրայ: Ընդհանուր առկարելով թուելէ ետք յիշեալ յարաբերութեանը գանազան փուլերը, եկեղեցւոյ միութեան հարցով յոյն եկեղեցւոյ պայմաններն ու Շնորհալի Յայրապետին պատասխանները, ան ծանրացաւ քրիստոսաբանութեան եւ յատկապէս Զրիստոսի աստուածային ու մարդկային բնութեանը փոխարաբերութեան վրայ: Վեհափառ Յայրապետը յստակօրէն պարզեց Ս. Ներսես Շնորհալի քրիստոսաբանական մօտեցումը: Այս օրին ներս, Նոյն Սրբութիւնը կարեւորութեամբ ընդգծեց, որ Յայր եկեղեցին monophysite չէ, ինչ որ Յոյն եկեղեցին մինչեւ այսօր կը կարծէ, այլ՝ Յայր եկեղեցին miaphysite է, եւ այս երկու ըմբռնումներուն մեջ տարբերութիւնը մեծ է:

Այս օրին ներս, Նոյն Սրբութիւնը կարեւորութեամբ ընդգծեց, որ Յայր եկեղեցին monophysite չէ, ինչ որ Յոյն եկեղեցին մինչեւ այսօր կը կարծէ, այլ՝ Յայր եկեղեցին miaphysite է, եւ այս երկու ըմբռնումներուն մեջ տարբերութիւնը մեծ է:



Վեհափառ Յայրապետը իր դասախոսութիւնը եզրակացուց երկու մեքերումներ կատարելով ըզրկեղոնական եւ ոչ-ըզրկեղոնական եկեղեցիներու միջեւ տեղի ունեցած աստուածաբանական երկխօսութեան յայտարարութենէն եւ Տիեզերական պատրիարք Աթենականի մէկ վկայութենէն, որոնք տարբեր մօտեցումներով կ'ըսեն, թէ ըզրկեղոնական եւ ոչ-ըզրկեղոնական

Եկեղեցիներու մօտեցումներուն միջեւ բովանդակային տարբերութիւններ չկան, այլ կայ բառապաշարի տարբեր գործածութիւն: Ապա, Վեհափառ Յայրապետը ըստ, որ երկէ կամ այսօր, այն ինչ որ երկար քննարկումներ եւ ուսումնասիրութիւններէ ետք կ'երգարկացնենք, Ս. Ներսես Շնորհալի Յայրապետը պարզ ու յստակ բացատրութիւններով յայտնած է 12-րդ դարուն:



Յայտնենք, որ դասախոսութենէն առաջ Վեհափառ Յայրապետը հիւրասիրուցաւ համալսարանի նախագահին ու պատասխանատուներուն կողմէ. ապա, ան առիթ ունեցաւ զրուցելու դասախօսներուն եւ ուսանողներուն հետ:

ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԹ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՅԱՏԿԱՅՈՒՄԾ ԴՐԱՄԱՆՆՈՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄՏՈՐԱԳՐՄԱՆ ԴԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

17 Մարտին, օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. ծայրագոյն պատրիարք եւ Ամենայն Յայոց կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի ունեցաւ Ծափոնի կառավարութեան կողմէ Մայր Աթոռի թանգարաններուն յատկացուած դրամաշնորհի համաձայնագրի ստորագրման պաշտօնական արարողութիւնը:



Դրամաշնորհային ծրագիրը, որով ձեռք պիտի բերուին անհրաժեշտ սարքաւորումները, կեանքի պիտի կոչուի Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան միջոցով: Այդ հանդիսաւոր առիթով Սուրբ Էջմիածնի ժամանած էին Յայաստանի մէջ Ծափոնի արտակարգ եւ լիազօր դեսպան Մասանորի Ֆուքուշիման, ԶԲԸՄ Յայաստանի նախագահ Վազգէն Եագուպեանը, դեսպանատան եւ ԶԲԸՄ-ի գրասենեակի աշխատակիցներ:

Մայր Աթոռի Ռուբէն Սեւակի թանգարանի մէջ հիւրերը ընդունեց Արտաքին յարաբերութիւններու եւ արարողակարգի բաժնի տնօրէն գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Յովհաննիսեանը՝ փոխանցելով Ամենայն Յայոց Յայրապետին ողջոյններն ու օրհնութիւնը:



Ինչպէս նշեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններու եւ արխիվ տնօրէն հոգեշնորհ Տ. Ասողիկ արքեպիսկոպոս Կարապետեանը՝ 2014 թուականէն արդիւնաւէտ համագործակցութիւն սկսած է Ծափոնէն ժամանած վերականգնողներուն հետ: Պարբերաբար իրականացուող սեմինարներու ընթացքին ճափոնական կողմը բարի ցանկութեամբ որդեգրած է աջակցիլ Սուրբ Էջմիածնի թանգարաններուն վերականգնման բաժնին: Այս հարցը արծարծուած էր նաեւ Վեհափառ Յայրապետին հետ հանդիպման ժամանակ, երբ տարիներ առաջ Մայր Աթոռ այցելած էր Ծափոնէն ժամանած բարձրաստիճան պատուիրակութիւն մը: Այդ օրուանց ի վեր թանգարաններուն տնօրէնութիւնը սկսած է աշխատիլ Ծափոնի դեսպանութեան հետ դրամաշնորհի յայտը ներկայացնելու առնչութեամբ:

Յայաստանի մէջ Ծափոնի դեսպան Մասանորի Ֆուքուշիման նշեց, որ Յայր Աթոռ Եզմիածնի Սուրբ Եկեղեցւոյ դերը հայ ժողովուրդի կեանքին մէջ անգնահատելի է, իսկ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններուն մէջ պահպանուող մշակութային արժանիքները՝ անգին:

Իր հերթին, ԶԲԸՄ Յայաստանի նախագահ Վազգէն Եագուպեան արձանագրեց, որ Յայր եկեղեցւոյ կատարած աշխատանքը մեր ազգին համար շատ կարեւոր է, եւ Վերականգնողական կեդրոնը Նոր սարքաւորումներով համալրուելէ յետոյ լաւագոյն պիտի ներկայանայ աշխարհին իր պատմական, մշակութային ժառանգութեամբ:



Ծափոնը եւ Յայաստանը ունին հարուստ ինստիտուցիոնալ ժառանգութեան հանդէպ: Այս ծրագրին միջոցով երկու երկիրներուն միջեւ բարեկամութիւնը աւելի պիտի ամրապնդուի: Նշենք, որ 2012 թուականէն ի վեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանները սկսած են գործուածքի ֆոնտի հիմնաւորոց առարկաներու վերանորոգութիւնները: Յայր վերականգնող մասնագետներուն աշխատանքները բարձր գնահատանքի արժանացած են Պետական Երմիթաժի, Ծափոնի Սակայի համալսարանի եւ Նիւ Եորքի Մեթրոփոլիթան թանգարանի համապատասխան բաժնիներու վարպետ վերականգնողներուն կողմէ:

ՔԱՆՈՆԱՀԱՐՈՒՄԻ ՀԻ ՄԱՐԻԱՆՆԱ ԳԵՈՐԳԵԱՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՀՆՉԵՑՈՒՑԱԾ Ե ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ ԵՒ ԽՕՍԱԾ Ե ՀԱՅՄԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

«Տաղարան» հնագոյն երաժշտութեան անսամպլի երաժիշտ եւ շարք մը միջազգային մրցանակներու դափնեկիր, քանոնահարուհի Մարիաննա Գեորգեանը օրերս մենահամերգով հանդէս եկած է Զնդկաստանի Թրիանտրոմ քաղաքին մէջ՝ հնդկ երաժիշտներու նուագակցութեամբ՝ ներկայացնելով Սայաթ-Նովայի, Խաչատուր Աւետիսեանի, այլ երաժշտականներու ստեղծագործութիւններ ու մշակումներ:

Համերգային երեկոն տեղի ունեցած է Kerala Arts and Crafts Village-ի կազմակերպուած WOW (World of Women) կանանց տօնին նուիրուած շաբթուան ծիրին մէջ:

Մարիաննան կ'ըսէ, որ իւրաքանչիւր օրը նուիրուած եղած է որեւէ ոլորտի՝ ոսկերչութեան, տարագին, պարուեստին, գորգագործութեան եւ այլն: Մարիաննա Գեորգեանը պատուաւոր հիւրի կարգավիճակով մեկնած է Զնդկաստան: Կը խոստովանի, որ շատ հաճելի էր, որ երաժշտական մասը վստահած են իրեն:

«Մէկ ժամէ աւելի տեսած համերգին կը փափաքէի, որ միայն հայկական երաժշտութիւն հնչէ, սակայն, երբ այստեղ էինք, կարծեցի, որ ճիշդ պիտի ըլլայ՝ մէկ հնդկական գործ ներկայացուի, որն ալ բոլոր երաժիշտներուն նուագակցութեամբ կատարեց երգչուհի Ամոնթա Ռաճան: Կը նուագակցէին թապիա նուագող Մահշէ Մանին, դաշնակահար Ռոհիտ Զրիշան, ճինշու Վարման, որ կը տիրապետեր եօթը նուագարանի՝ տարբեր ազգերու տարալուք, քահոն, ասալաթ, ռէինստիք, չիմեն, շաքերս, սփլեշ: Բոլորն ալ բարձրակարգ ու տաղանդաւոր երաժիշտներ էին: Ինծի հաճելի էր համագործակցիլ անոնց հետ: Չհասկնալով միմեանց լեզուն՝ մենք խօսեցանք հոգու եւ երաժշտութեան տիեզերական լեզուով», կը պատմէ քանոնահարուհին:

Մարիաննայի խօսքով՝ բոլորին նպատակն էր երաժշտութիւնը հասցնել հանդիսատեսին եւ անոնաւալի ներուժ փոխանցել, ինչի մէջ իրենք յաջողեցան:

«Կրցանք գերազանցել մենք մեզ», կը նշէ քանոնահարուհին եւ կը յաւելէ, որ մարդիկ շատ ջերմ ու հիւրընկալ էին, սիրած են զինք եւ իր արուեստը, Յայաստանը: Նոյն իսկ փորձած են հնդկադասիկի հայերէնով:

Համերգի աւարտին միջոցառման կազմակերպիչները Մարիաննա Գեորգեանին երախտագիտութեան նամակ, շնորհակալագիր եւ մրցանակ յանձնած են՝ բարձրակարգ համերգին համար:

Քանոնը հետաքրքրած է ոչ միայն հնդկները, այլեւ՝

անգլիացիները: «Պանդուկին մէջ իմ հարեաններս անգլիացի ամուսիններ էին: Երբ ծանօթացանք, անոնք շատ հետաքրքրեց ջանոն նուագարանը, անոնք նոյնիսկ համերգին ներկայ ըլլալու ցանկութիւն յայտնեցին, մինչդէռ տոմսերը արդէն սպառած էին: Ըսի՝ կու գաք եւ ինչպէս Յայաստանի մէջ ընդունուած է, կ'ըսեք որ Մարիաննա Գեորգեանի հիւրերն ենք եւ առաջին շարքը տեղեր ունիք: Այդպէս ալ ըրած էին: Ըստ ուրախացայ, երբ համերգի ընթացքին նկատեցի զիրենք», կը պատմէ քանոնահարուհին:

Մարիաննա Գեորգեանը շարք մը հարցազրոյցներ տալու հնարաւորութիւն ունեցած է եւ, օգտուելով առիթէն, բարձրաձայնած է նաեւ Յայաստանը յուզող խնդիրները: Հարցազրոյցները անգլերէն եղած են, սակայն հայոց լեզուն հնչեցնելու, ինչպէս նաեւ աւելի լիարժեք ամեն բան պատմելու նպատակով, զրոյցներէն մէկը մայրենիով կազմակերպած է: «Ըսի, որ պարզապէս երաժշտութիւն



չեն ներկայացներ, այլ Յայաստանի եւ իմ կեանքիս պատմութիւնը կը պատմէմ: Անորադարձայ մեր ցաւերուն՝ Յայոց ցեղասպանութեան, պատերազմներուն, յատուկ խօսեցայ Արցախեան 44-օրեայ պատերազմին մասին», կը նշէ ան:

Քանոնահարուհին նաեւ պատմած է աշխարհահռչակ բազմաթիւ հայերու մասին, որոնք պարբերաբար կը փայլէին տարբեր հարթակներու մէջ եւ ընդգծած է, որ թե՛ ինք, թե՛ հայ ազգը կը հպարտանայ իր տաղանդներով:

Մարիաննային ոչ միայն գրաւած է հնդկական կողմի՝ իրեն աջակցելու, ամեն բան փայլուն կազմակերպելու պատրաստակամութիւնը, այլեւ՝ երկրին մշակոյթը:



«Այցելած եմ տեղի համալսարանի, շփուեմ եմ փրոֆեսորադասախօսական կազմին հետ, եղած են հնդկ աստուածներէն Ծիայի սըրբավարին մէջ: Զնդկաստանի մէջ կան վայրեր, ուր կարելի չէ մուտք գործել, բայց, երբ ուղեկցող խմբակը կը ներկայացներ զիս, բացառութիւններ կ'ընէին. մարդիկ շատ ոգեւորուած էին: Ծանօթացայ հնդկական խոհանոցին, փորձեցի իրենց աւանդական ըզգեստները: Ես շատ սիրեցի Թրիանտրոմը, բնակիչները եւ ամենակարեւորը՝ ովկիանոսն ու այրող աւազը: Ինչպէս իրենք կ'ըսեն, որ ես կը գտնուէի Աստուծոյ տան մէջ: Ըստ տեղացիներուն՝ երբ Աստուծո խօսակցած է երկիրը, այդ դրամաշնորհ իր համար պահած է», ոգեւորութեամբ կը յիշէ Մարիաննան ու կը յաւելէ, որ յառաջիկային տօն կը սպասուի նաեւ հայաստանեան ունկնդիրին:

28 Մարտին Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան տան մէջ պիտի կայանայ համերգ, ուր քանոնահարուհին պիտի ներկայանայ մէկ համարով. պիտի ըլլայ Յայաստանեան առաջին ներկայացումը: «Ինծի պատիւ ընձեռուած է կատարելու Տաճկիստանէն երաժշտահան Թրիպիտոն Շախիտիլի «Արժանի քումէրթօ կրոսոս», որ գրուած է քանոնի, ջութակի եւ կամերային նուագախումբի համար: Հեղինակը Արամ Խաչատրեանի սանը եղած է: Բեմ պիտի բարձրանայ Յայաստանի պետական կամերային նուագախումբը, որ պիտի ղեկավարէ Մաքսիմ Լուկիչովը՝ Ռուսիայէն, ջութակահար Կարեն Շահակյանէն», կը տեղեկացնէ Մարիաննա Գեորգեանը եւ շնորհակալութիւն կը յայտնէ Կամերային երաժշտութեան տան տնօրէնութեան ու իր վարպետին՝ Սեդրակ Երկանեանին թե՛ Զնդկաստանի մէջ ըլլալու օրերուն, թե՛ առհասարակ իրեն աջակցելու համար:

